Վերանայված և հաստատված է
«Ուրարտու» համալսարանի
գիտական խորհրդի
2014թ. օգոստոսի 25-ի նիստում

Ռեկտոր _____ Ս.Ս. Սեդրակյան

«Ուրարտու» համալսարանի որակի քաղաքականության ընդհանուր դրույթներ

Որակի քաղաքականության նպատակը և իրականացումը

«Ուրարտու» համալսարանի որակի քաղաքականությունը միտված է ռազմավարական նպատակների իրականացմանը(տե՛ս «Ուրարտու» համալսարանի ռազմավարական ծրագիր):
Որակի քաղաքականությունից բխում են կրթության որակի շարունակական բարելավման գործընթացները:
Որակի քաղաքականությունը տարվում է ըստ հաստատության որակի ապահովման ոլորտների՝

- կառավարման և վարչարարության,
- ՄԿԾ զարգացման և իրականացման,
- ուսումնառության և ուսանողական կյանքի կազմակերպման
- պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման և զարգացման,
- հետազոտության,
- ենթակառուցվածքների և ռեսուրսների ձևավորման և զարգացման,
- հասարակական պատասխանատվության,
- արտաքին կապերի և միջազգայնացման:

Որակի քաղաքականությունն իրականացվում է ըստ որակի ապահովման գործընթացների, որոնք ամրագրված են որակի ապահովման չափանիշների և չափորոշիչների համապատասխան փաստաթղթերում՝ կանոնակարգերում, կարգերում, ընթացակարգերում: Որակի քաղաքականությունն իրականացվում է՝ հաշվի առնելով, որ որակի ապահովման համակարգն ուղղված է որակի ապահովման ոլորտային գործընթացներին և նպատակներին:

Որակի քաղաքականությունը որակի ապահովման գործընթացների տեղայնացման «կանոնների» ամբողջությունն է:

Որակի քաղաքականությունը իրականացնում են համալսարանի ստորաբաժանումները (տե՛ս «Ուրարտու» համալսարանի կազմակերպական կառուցվածք): Յուրաքանչյուր ստորաբաժանմ անիրականացրած գործընթացները վերաբերվում են որակի ապահովման հիմնական ոլորտներից մեկին, կամ մի քանիսին՝ այդպիսով ապահովելով այս ոլորտների գործունակությունը:

Ուստի, տվյալ ստորաբաժանման պատասխանատուն պատասխանատվություն է կրում նաև տվյալ ստորաբաժանմանը վերաբերող որակի ապահովման ոլորտներում տարվող որակի քաղաքականության համար՝ վերահսկվելով «Ուրարտու» համալսարանի որակի ապահովման կենտրոնի կողմից, որը որակի քաղաքականության իրականացման հարցում տրամադրում է համապատասխան խորհրդատվություն և տալիս ուղղություններ:

Որակի քաղաքականությունը վերաբերում է «Ուրարտու» համալսարանի բոլոր շահառուներին:

Որակի քաղաքականության իրականացման հարցում խախտումներն անթույլատրելի են:

Որակի քաղաքականությունը տարածվում է հաստատության իրականացրած բոլոր գործառույթների վրա:

«Ուրարտու» համալսարանի որակի ապահովման գործընթացների գնահատման արդյունքներն ամփոփվում է նորակի քաղաքականության իրականացման ամենամյա հաշվետվության մեջ, որը պարունակում է

- որակի ապահովման ոլորտների գործառույթայնության համակարգային վերլուծություն,
- տեղեկատվություն(որակական և քանակական), իրականացված որակի քաղաքականության բացերի և շեղումների մասին,
- առաջարկություններ որակի քաղաքականության բարելավման համար:
- որակի քաղաքականության իրականացման ամենամյա հաշվետվությունը հաստատվում է «Ուրարտու» համալսարանի գիտական խորհրդի կողմից:

Յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ, հիմնվելով որակի քաղաքականության իրականացման ամենամյա հաստատված հաշվետվությունների վրա, որակի քաղաքականությունը ենթարկվում է վերանայման:

«Ուրարտու» համալսարանի ակադեմիական աշխատակազմին վերաբերող որակի քաղաքականությունը

- Ակադեմիական աշխատակազմի ներկայացուցիչները գործում են որպես ռազմավարության իրականացմանը նպաստող պատասխանատու մասնագետներ՝ առաջնորդվելով ստորաբաժանումների ռազմավարական ծրագրերով, ներքին կանոնակարգերով, կարգերով, ընթացակարգերով:
- Դասախոսները խրախուսում են իրենց ուսանողներին ուսումնառության գործընթացի ակտիվ և հաջողակ մասնակիցը լինելու համար. դասախոսները.
    - ակտիվ մասնակցություն են ունենում մասնագիտության կրթական ծրագրերի (այսուհետև՝ ՄԿԾ) ձևավորման և իրականացման հարցում,
    - ակադեմիական և աշխատակազմի այլ ներկայացուցիչների, այլ շահառուների հետ համագործակցության միջոցով սահմանում են առարկայական ծրագրերի ուսումնառության վերջնադյունքները, որոնք փոխկապվում են կրթական ծրագրերի ուսումնառության վերջնարդյունքների հետ՝ ապահովելով «Ուրարտու» համալսարանի և ազգային որակավորումների շրջանակներին համապատասխան կրթություն:
    - ուսանողներին մանրամասն ներկայացնում են իրենց առարկայական ծրագրերը:
- Դասախոսները ներկայանում են որպես մասնագիտորեն և մեթոդապես պատրաստված աշխատակիցներ. դասախոսները.
    - ունեն իրենց դասընթացը պլանավորելու հմտություն, նախապես պատրաստվում են դասընթացին ըստ ՄԿԾ և առարկայական ծրագրերի,
    - անընդհատ ուսումնասիրում և վերանայում են դասավանդման մեթոդները, փնտրում են նոր, առավել արդյունավետ մոտեցումներ՝ ուսանողի առաջադիմության բարձրացմանը նպաստելու համար,
    - մասնակցում են վերապատրաստումների՝ շարունակաբար բարելավելով իրենց մասնագիտական կարողություններն ու դասավանդման հմտությունները,
    - ստեղծում են կրթական նպատակների իրականացման բարենպաստ կրթական միջավայր,
    - արդյունավետորեն ուղղորդում և կառավարում են ուսանողների վարքագիծը դասաժամերի ընթացքում,
    - մատուցում են բովանդակալից, հետաքրքիր, հագեցած, մանրամասնորեն բացատրված նյութ, որը ներառում է օրինակներ,

հասկանալի է շարադրված, վերանայված է ժամանակի պահանջներին համապատասխան:

- Դասախոսները կիրառում են գնահատման մեխանիզմներ՝ բարելավելու, վերահսկելու, կառավարելու համար ուսանողների ուսումնառության ընթացքը. դասախոսները.
  - կիրառում են գնահատման ընթացիկ և ամփոփիչ մեխանիզմներ՝ չափելու, վերահսկելու, հավաստելու և բարձրացնելու համար դասավանդման արդյունավետությունը,
  - հետևողական են ամփոփիչ գնահատման հարցում՝ հաշվի առնելով ընթացիկ գնահատման արդյունքները,
  - կիրառում են գնահատման մեխանիզմները առարկայական ծրագրով նախանշվող ուսումնառության վերջնարդյունքներին հասնելու նպատակով,
  - անընդհատ հետադարձ կապ են ապահովում ուսանողների համար՝ գնահատումը համարելով ուսումնառության արդյունավետության բարձրացման միջոց, ընդգծելով գնահատման կրթական նշանակությունը,
  - հետևողական են իրենց կողմից տրված հանձնարարությունների իրականացում ըստուգելու հարցում,
  - դասախոսության ժամանակ հետևողականորեն անդրադառնում են ուսանողների հարցերին և կրթական նյութերի անհասկանալի ու բարդ մասերին՝ հաշվի առնելով և չափելի դարձնելով (դասախոսն իրականացնում է լսարանային հարցախույզեր, դիտարկումներ, ուսանողական ֆոկուս խմբեր, իր գործընկերների փորձին ծանոթանալու միջոցառումներ և այլն) ուսանողների կարծիքը դասընթացի վերաբերյալ:
- Դասախոսները ցուցաբերում են գիտական ակտիվություն. դասախոսները.
  - Բավարարում են պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգով ամրագրված պահանջներին,
  - ստեղծում են առանձին դասընթացների, կամ դասընթացների որոշակի բաժինների դասախոսությունների անհրաժեշտ նյութեր, իրականացնում են գործնական լաբորատոր, կուրսային, նախագծային առաջադրանքների գրախոսություններ, տալիս են մեթոդական ցուցումներ,
  - մասնակցում են գիտաժողովների, աշխատաժողովների, ունենում են զեկուցումներ:
  - նախագծում են թեմատիկ գիտահետազոտական ծրագրեր և մասնակցում գիտական դրամաշնորհային նախագծերի:

• ցուցաբերում են հասարակական ակտիվություն. Իրենց դրսևորում են որպես «Ուրարտու» համալսարանի կրթական համայնքի ներկայացուցիչներ՝ մասնակցելով բուհի ներքին աշխատանքային խմբերի գործունեությանը:

«Ուրարտու» համալսարանի մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ) որակի քաղաքականությունը

• «Ուրարտու» համալսարանը ձևավորում և գործարկում է ՄԿԾ մշակման, հաստատման, որակի գնահատման, մշտադիտարկման և պարբերական վերանայման համապատասխան մեխանիզմներ:
• ՄԿԾ համահունչ են պետական կրթական չափորոշիչներին և որակավորումների ազգային շրջանակին:
• ՄԿԾ համապատասխանում են «Ուրարտու» համալսարանի առաքելությանը, որակավորումների շրջանակին:
• ՄԿԾ արտացոլում են «Ուրարտու» համալսարանի իրականացրած հիմնական ուսումնանական գործընթացները:
• «Ուրարտու» համալսարանի ՄԿԾ, ըստ անհրաժեշտության, ներկայացվում են հավատարմագրման՝ որակի արտաքին ապահովման նպատակով:
• Արդյունավետ կերպով գործարկվում է ՄԿԾ մշակման, հաստատման, մշտադիտարկման և վերանայման ընթացակարգը:
• ՄԿԾ ունեն դասավանդման և ուսումնառության արդյունավետությանը նպաստող կառուցվածք:
• ՄԿԾ բովանդակային առումով կապված են առարկայական ծրագրերի հետ. մասնագիտության կրթական և առարկայական ծրագրերի հիմնական կետերը (նպատակներն ու խնդիրները, սահմանված ուսումնառության վերջնարդյունքները, առաջարկվող մասնագիտական գրականությունը, դասավանդման և ուսումնառության մեթոդների նկարագրությունները, ուսումնառողների գնահատման չափանիշները և այլն) փոխպայմանավորող են և տրամաբանորեն փոխկապված:
• «Ուրարտու» համալսարանի ստորաբաժանումներն ապահովումեն ՄԿԾ իրականացման համար անհրաժեշտ նյութական և մարդկային ռեսուրսների հասանելիությունը, այդ ռեսուրսների օգտագործման գործընթացի հաշվետվողականությունը:

- Հետևողականորեն մատուցվում են ՄԿԾ առնչվող խորհրդատվական ծառայություններ (հատուկ ուշադրություն է դարձվում ուսանողներին տրամադրվող խորհրդատվական ծառայություններին):
- ՄԿԾ նախագծվում և վերանայվում են ուսումնառողների, դասավանդողների, այլ ներքին, արտաքին շահակիցների և հետաքրքրված կողմերի մասնակցության ապահովմամբ: ՄԿԾ նախագծման և վերանայման համար էական նշանակություն է տրվում գործատուների և աշխատաշուկայի ներկայացուցիչների, ինչպես նաև ուսանողների կողմից տրամադրվող հետադարձ կապին:
- ՄԿԾ նախագծման և վերանայման, ինչպես նաև այս գործընթացների թափանցիկության ու հաշվետվողականության ապահովման գործընթացները հետևողականորեն իրականացնում են «Ուրարտու» համալսարանի ամբիոնները:
- «Ուրարտու» համալսարանը ՄԿԾ նախագծման և վերանայման համար ունեն առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման մեթոդաբանություն:
- ՄԿԾ արատահայտում են ուսումնառողի և շրջանավարտի կրթությունը շարունակելու և կարիերայի զարգացման հնարավորությունները:
- ՄԿԾ նպաստումեն «Ուրարտու» համալսարանի ուսումնառողների և դասավանդողների ակադեմիական շարժունությանը և միջազգայնացմանը:
- ՄԿԾ՝ հաստատամանը ենթակա տարբերակների նախատիպերը ներկայացվում են ներքին և արտաքին շահակիցներին (փորձագետների՝ ուսանողների, դասախոսների, գործատուների, ազգային և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների և այլն): Հավաքագրվում են առաջարկություններ:
- ՄԿԾ հաստատման գործընթացի, ինչպես նաև այդ գործընթացի թափանցիկության ու հաշվետվողականության ապահովման գործընթացները հետևողականորեն իրականացնում է «Ուրարտու» համալսարանի գիտական խորհուրդը:
- «Ուրարտու» համալսարանի որակիապահովման կենտրոնը մշակում է ՄԿԾ գնահատման մեթոդաբանությունը, հաստատում է գնահատման իրականացման ժամանակացույցը, պարբերաբար իրականացնում է գնահատումը, ինչպես նաև վերլուծության է ենթարկում և տարածում գնահատման արդյունքները՝ ապահովելով գնահատման ողջ գործընթացի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:
- ՄԿԾ, հետևաբար նաև ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի, շարունակական բարելավումն ապահովելու համար «Ուրարտու» համալսարանի որակի ապահովման կենտրոնը, հիմնվելով մասնագիտության

կրթական ծրագրերի գնահատման արդյունքների վրա, իրականացնում է պրոֆեսորադասախոսական և վարչականկազմի պարբերական վերապատրաստումներ՝ հիմք ընդունելով դասախոսների կարիքների գնահատումը, ուսանողակենտրոն մոտեցումները, ուսումնառողների առաջադիմությունը և հաջողությունը ուսման մեջ:

- Որակի ապահովման կենտրոնը մշտադիտարկում է «Ուրարտու» համալսարանի ֆակուլտետների կողմից ՄԿԾ նախագծման և վերանայման, ինչպես նաև այս գործընթացների թափանցիկության ու հաշվետվողականության ապահովման գործընթացների իրականացումն ըստ ՄԿԾ մշակման, հաստատման, մշտադիտարկման և վերանայման ընթացակարգի:
- Որակի ապահովման կենտրոնը մշտադիտարկում է «Ուրարտու» համալսարանի գիտական խորհրդի կողմից ՄԿԾ հաստատման, ինչպես նաև այդ գործընթացի թափանցիկության ու հաշվետվողականության ապահովման գործընթացների իրականացումն ըստ ՄԿԾ մշակման, հաստատման, մշտադիտարկման և վերանայման ընթացակարգի:
- ՄԿԾ գնահատման ամբողջական գործընթացը բխում է «Ուրարտու» համալսարանի գնահատողի հետ ազատությունների մեթոդաբանությունից:

«Ուրարտու» համալսարանի հետազոտությանը վերաբերող որակի քաղաքականությունը

- Հետազոտական գործունեությունն իրականացվում է «Ուրարտու» համալսարանի ռազմավարական ծրագրին համապատասխան:
- «Ուրարտու» համալսարանի ֆակուլտետները իրականացնում են հետազոտական աշխատանքները խթանող ծրագրեր, կազմակերպում են այդ ծրագրերի իրականացմանը նպաստող հետազոտական նախագծերի տեղայնացման գործընթացը:
- «Ուրարտու» համալսարանի ֆակուլտետները մշակում և լրամշակում են հետազոտական աշխատանքների իրականացման կարգեր, ընթացակարգեր, գործիքակազմ, որոնց հիման վրա գնահատվում և վավարացվում են հետազոտական աշխատանքների արդյունքները, ապահովվում է ակադեմիակ անազնվությունը:
- «Ուրարտու» համալսարանի ֆակուլտետների իրականացրած ծրագրերն ուղղված են գիտակրթական գործունեության հետազոտական տարրի ապահովմանը:

- «Ուրարտու» համալսարանի ֆակուլտետների երկարաժամկետ ծրագրերի իրականացումը հիմնված է վերջիններիս կողմից հաստատվող հետազոտական կարճաժամկետ նախագծերի վրա:
- Կարճաժամկետ հետազոտական նախագծերը հաստատվում և իրականացվում են ըստ «Ուրարտու» համալսարանի ֆակուլտետների երկարաժամկետ ծրագրերի ընթացակարգերի և դրանցով ենթադրվող փաստաթղթերի:
- «Ուրարտու» համալսարանի ֆակուլտետների իրականացրած երկարաժամկետ ծրագրերով և կարճաժամկետ նախագծերով խթանվում, կազմակերպվում և գնահատվում «Ուրարտու» համալսարանի
  - Ակադեմիական աշխատակազմի հետազոտական գործունեությունը,
  - դասախոս-ուսանող համատեղ հետազոտական գործունեությունը,
  - երիտասարդ հետազոտողների անհատական հետազոտությունը:
  - «Ուրարտու» համալսարանի ֆակուլտետները, հիմնվելով իրենց կողմից իրականացվող երկարաժամկետ ծրագրերի և կարճաժամկետ նախագծերի արդյունավետության գնահատման տվյալների վրա, չափելի է դարձնում այդ ծրագրերի և ուսումնական գործընթացի փոխ կապվածությունը:
- «Ուրարտու» համալսարանի ֆակուլտետների հետազոտական գործունեությունը նպաստում է «Ուրարտու» համալսարանի ինստիտուցիոնալ զարգացմանը:
- «Ուրարտու» համալսարանի ֆակուլտետներիգործունեությունննուղղվում է «Ուրարտու» համալսարանի ֆակուլտետների կրթական կարիքների բավարարմանը՝
- ակադեմիական աշխատակազմի գիտահետազոտական գործունեության զարգացմանը և միջազգայնացմանը,
- ուսանողների հետազոտական գործունեության զարգացմանը և միջազգայնացմանը,
- «Ուրարտու» համալսարանի ազգային/միջազգային կազմակերպություններ կապի ամրապնդմանը գիտահետազոտական ոլորտում:
- «Ուրարտու» համալսարանի ֆակուլտետները հավաքագրում են «Ուրարտու» համալսարանի ակադեմիական աշխատակազմի և ուսանողների հետազոտական գործունեության հետ կապված վիճակագրական տեղեկատվություն, իրականացնում հետազոտական գործունեության վերլուծություն:
- «Ուրարտու» համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունները նպաստումեն «Ուրարտու» համալսարանի ֆակուլտետների հետազոտական գործունեության արդյունավետությանը:

«Ուրարտու» համալսարանի հասարակական պատասխանատվությանը վերաբերող որակի քաղաքականությունը

- «Ուրարտու» համալսարանի իր կրթական գործունեությունն իրականացնում է՝ ելնելով իր շահակիցների սոցիալական կարիքներից և բարեկեցությունից, պետության և հասարակության նկատմամբ հաշվետվողական լինելու և վերջիններիս ծառայություններ մատուցելու անհրաժեշտությունից:
- «Ուրարտու» համալսարանն իր կրթական գործունեության ընթացքում ապահովում է իր աշխատակազմի, ուսանողների, համագործակիցների, ինչպես նաև սոցիալական համայնքների ու հասարակության տեղեկացվածությունը իր մասին՝ ապահովելով իր գործունեության թափանցիկությունը:
- «Ուրարտու» համալսարանի շարունակաբար մշակում է հասարակության հետ կապի մեխանիզմներ:
- «Ուրարտու» համալսարանի, գնահատելովիր միջավայրի կարիքները, իրականացնում է սոցիալական միջամտության նախագծեր:
- «Ուրարտու» համալսարանն իրականացնում է հարատև կրթությանը և մեծահասակների կրթությանը միտված գործունեություն:

«Ուրարտու» համալսարանի ենթակառուցվածքներին և ռեսուրսներին վերաբերող որակի քաղաքականությունը

- «Ուրարտու» համալսարանի ենթակառուցվածքները զարգացվում են և ներկայանալի են որպես կազմակերպական կառուցվածքում առկա կազմակերպական ստորաբաժանումներ, որոնցում տեղակայվում են ռեսուրսները՝ ապահովելով կազմակերպության շարունակական զարգացումը ի նպաստ վերջինիս ներքին և արտաքին շահառուների կարիքների բավարարման և կրթական որակի բարձրացման:
- «Ուրարտու» համալսարանը համամասնորեն զարգացնում է իր մարդկային և նյութական ռեսուրսները:
- «Ուրարտու» համալսարանը, ելնելով գնահատող հետազոտությունների մեթոդաբանությունից, գնահատում է ենթակառուցվածքների և ռեսուրսների պլանավորման և կատարելագործման գործընթացը՝ վերհանելով հիմնախնդրները և լուծում տալով դրանց:

- «Ուրարտու» համալսարանը հավաստում է, որ համալսարանի ենթակառուցվածքները և ռեսուրսները գործում են նպաստելով ռազմավարության իրականացմանը:
- «Ուրարտու» համալսարանը ապահովում է ակադեմիական ենթակառուցվածքների և ռեսուրսների (դասախոսությունների հնարավորություններ, սեմինարների և այլ դասընթացների իրականացման պայմաններ, նախագծերի իրականացման հնարավորություններ, քննաշրջանի արդյունավետ անցկացման պայմաններ, գրադարանային ռեսուրսների մատչելիություն, համացանցի հասանելիություն և այլն) շարունակական կատարելագործումը:
- «Ուրարտու» համալսարանը պահովում է ուսանողների հարմարավետությունը համալսարանում՝ նպաստելով նրանց առաջադիմության բարձրացմանը:
- «Ուրարտու» համալսարանը կատարելագործում է վարչարարական ծառայությունների մատուցումը՝ կապված սննդի, մաքրության, անվտանգության և տնտեսվարության հետ:
- «Ուրարտու» համալսարանը տրամադրում է ընթացիկ աջակցություն, խորհրդատվություն և ուղղորդում ենթակառուցվածքներին և ռեսուրսներին վերաբերող կարիքների հետ կապված:
- «Ուրարտու» համալսարանի հավաքագրում է ենթակառուցվածքների և ռեսուրսների զարգացմանը վերաբերող առաջարկությունները՝ խթանելով որոշումների կայացման արդյունավետ գործընթաց:
- «Ուրարտու» համալսարանի փաստաթղթավորում է ենթակառուցվածքների և ռեսուրսների օգտագործամը վերաբերող գործունեությունը:

«Ուրարտու» համալսարանի ուսանողներին վերաբերող որակի քաղաքականությունը

- «Ուրարտու» համալսարանի յուրաքանչյուր ստորաբաժանում իր հիմնական գործառույթների իրականացմամբ և համապատասխան խորհդատվություն տրամադրմամբ կայացնում է որպես ուսանողակենտրոն կրթական հաստատություն:
- «Ուրարտու» համալսարանը յուրաքանչյուր տարեսկզբին իրականացնում է նոր ուսանողների կողմնորոշման օր՝ ծանոթացնելով ուսանողներին հաստատության հիմնական գործունեությանը և այդ հարցում նրանց դերին:

ուսանողներին հաստատության հիմնական գործունեությանը և այդ հարցում նրանց դերին:

- «Ուրարտու» համալսարանի ուսանողների ընդունելությունը կազմակերպում է համապատասխան ընթացակարգերով՝ բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերով:
- «Ուրարտու» համալսարանի ուսումնառությանը վերաբերող գործընթացները (սկսած ուսանողի ընդունելությունից) թափանցիկ են և արդար:
- ՄԿԾ կազմվում են՝ հաշվի առնելով ուսանողների կողմից դասախոսների և դասընթացի գնահատումները, ինչպես նաև ուսանողները ներգրավված են ՄԿԾ մշակման, հաստատման, մշտադիտարկման և վերանայման գործընթացներում:
- «Ուրարտու» համալսարանը ապահովում է իր ուսանողների շարժունությունը, նրանց տրամադրվող դիպլոմի/դիպլոմի հավելվածի ընթեռնելիությունը:
- «Ուրարտու» համալսարանը խրախուսում/պարգևատրում է լավագույն ՄՈԳ ունեցող ուսանողներին: Ըստ անհրաժեշտության, հեռացնում է ուսումնառության և վարքի կանոնների նկատմամբ անպատասխանատու ուսանողներին:
- «Ուրարտու» համալսարանի ուսանողները ծանոթ են ակադեմիական ազնվության կանոններին և իրենց ուսումնառությամբ նպաստում են պլագիարիզմի կանխարգելմանը:
- «Ուրարտու» համալսարանը ուսանողներին համարում է իր կողմից իրականացվող գնահատող հետազոտությունների առաջնային օբյեկտ՝ վերհանելով նրանց կարծիքը տրամադրած ծառայությունների մասին և արձագանքելով հետազոտությունների վերլուծություններին:
- «Ուրարտու» համալսարանի կարիերայիկենտրոնը նախագծում և իրականացնում է ուսանողների կարիքների վերհանման, կարողությունների հզորացմանն և ուսանողների կարիերային նպաստող դասընթացներ:
- «Ուրարտու» համալսարան ներգրավում է ուսանողներին հետազոտական աշխատանքների մեջ և խթանում նրանց հետազոտական գործունեությունը:
- «Ուրարտու» համալսարանի ուսանողական խորհուրդը հետևողական է ուսումնառողների իրավունքների պաշտպանության հարցում:
- «Ուրարտու» համալսարանի ուսանողական խորհուրդն անկախ մարմին է, որը լիարժեքորեն ներգրավված է հաստատության

ռազմավարության իրականացման գործընթացում՝ ապահովելով այս գործընթացում ուսանողների ներկայացուցչականությունը:

- «Ուրարտու» համալսարանի ամբիոնները հետևողական են ուսանողների բողոքների, բողոքարկումների հարցում:
- «Ուրարտու» համալսարանի հետևողական է իր ուսանողների կարիերայի և աշխատանքի տեղավորման հարցում՝ կապ պահպանելով շրջանավարտների հետ, ակտիվացնելով ներկայիս ուսանողների շրջանավարտներ հաղորդակցությունը:

«Ուրարտու» համալսարանի կառավարմանն ու վարչարարությանը վերաբերող որակի քաղաքականությունը

- «Ուրարտու» համալսարանի կառավարման և վարչարարության գործընթացները տեղի են ունենում համաձայն հաստատության ռազմավարության/ների, սույն քաղաքականության՝ ելնելով աշխատաքային էթիկայից:
- «Ուրարտու» համալսարանի կառվարման մարմինները ընտրվում և գործում են սահմանված կարգով:
- Ֆինանսների տնօրինումը ելնում է «Ուրարտու» համալսարանի ռազմավարական նպատակների իրականցումից:
- «Ուրարտու» համալսարանը արդյունավետ կերպով իրականացնում է աշխատակիցների աշխատանքի ընդունման, տեղափոխման, հեռացման, առաջխաղացման, խրախուսման և տույժի կիրառման գործընթացները:
- «Ուրարտու» համալսարանը կառավարման գործընթացներում ապահովված է ուսոմնառողների և դասավանդողների ներկայացուցչականությունը: Ուսումնառողները և դասավանդողները որոշումների կայացման գործընթացի էական մասնակիցներ են:
- «Ուրարտու» համալսարանի կառավարման և վարչարարության գործընթացները տեղի են ունենում համապատասխան գործողությունների պլանով: Իրականացնում է կառավարմանը և վարչարարությանը միտված գործողությունների կատորաղականի ցուցիչների գնահատում:
- «Ուրարտու» համալսարանը իրականացնում է աշխատակազմի գնահատում:

- «Ուրարտու» համալսարանի կառավարման և վարչարարության գործընթացները իրականացվում են՝ հաշվի առնելով հաստատության ներքին և արտաքին շահակիցների կարծիքը:
- «Ուրարտու» համալսարանի հաշվետվությունները տրամադրվում են համապատասխան ձևաչափով՝ ապահովելով հաստատության կառավարման և վարչարարության գործընթացների թափանցիկությունը:

«Ուրարտու» համալսարանի արտաքին կապերին և միջազգայնացմանը վերաբերող որակի քաղաքականությունը

- Միջազգայնացումը «Ուրարտու» համալսարանի ռազմավարական առաջնային նպատակ է: «Ուրարտու» համալսարանի միջազգային համագործակցության բաժինը գործում է համաձայն արտաքին կապերի և միջազգայնացման ռազմավարության:
- «Ուրարտու» համալսարանի ՄԿԾ մշակման, հաստատման, մշտադիտարկման և վերանայման գործընթացներն իրականացվում են հաշվի առնելով միջազգային ուսանողների և դասավանդողների ներգրաման, ինչպես նաև ուսանողների, դասախոսների և աշխատակիցների մոբիլության խթանման հնարավորությունները: